

# "Հյուսիսափայլ" ամսագրի լույսարնձայնման 155-ամյակը



**Հայ լուսավորական հրապարակախոսության մուկետիկը՝ "Հյուսիսափայլ" ամսագիրը, ծնունդ առավ ու վարձագավ Ռուսաստանի պատմության ամենահերոսական շրջաններից մեկի՝ 19-րդ դարի 60-ական թվականների բարդ իրադարձությունների ոլորտում: Կատարվող քաղաքական դեպքերը, գրականության մեջ սկսված աշխուժացումն ու պայքարը չէին կարող իրենց յուրահատուկ արտացոլումը չգտնել հայ իրականության մեջ: Տեղի էին ունենում այնպիսի երևույթներ, որոնց սկսում էին արձագանքել ժամանակի հայ առաջավոր մտավորականությունը, նրա ղեկավարած մամուլն ու գրականությունը: Այդպիսի արձագանքներից մեկն է "Հյուսիսափայլ" ամսագիրը, որի առաջին համարը լույս տեսավ 1858 թվականի հունվարին, Մոսկվայում, Ստեփանոս Նապարյանի խմբագրությամբ:**

Իր շուրջը համախմբելով ժամանակի կարող ուժերին՝ "Հյուսիսափայլը" սկսեց հետևողական պայքար մղել հանուն լուսավորության, հանուն ժողովրդական համապայման լեզվի, ինչպես հրապարակախոսական հոդվածներով, բնագիտական ու բարոյախոսական գրվածքներով, այնպես էլ բանաստեղծություններով, պոեմներով, արձակի մեղուկներով ու գրաբնագրատական փորձերով: Ամսագրի առաջադիմական բնույթը հայ պարբերական մամուլի պատմության մեջ մեծ չափով պայմանավորված է Ստեփանոս Նապարյանի և հանդեսի գլխավոր աշխատակից ու ռեդակտոր Միքայել Նալբանդյանի գործունեությամբ, որի շուրջն էին համախմբվել ժամանակի առաջավոր մտավորականությունն ու Մոսկվայի ուսանողությունը:

Հայ լուսավորիչ դեմոկրատների այս հրապարակությունով է նշանավորվում արևելահայ հասարակական մտքի վարդապետ տասնիններորդ դարի 60-ական թվականներին: Նրանք օրինակ ունեին ռուս դեմոկրատների (Գերցեն, Օգարյով, Չեռնիշևսկի, Դոբրոլյուբով) գործունեությունը:

Դեռևս 1857 թվականին,

ամսագրի ապագա խմբագիր Ստեփանոս Նապարյանը գրում է. "Մորա խորհուրդը լինելու է ռուսաբնակ հայերի մեջ տարածել այնպիսի տեղեկությունը և գիտելիք, որ անհրաժարելի հարկավոր են մեր օրերումը ամենայն մարդու որևիցե պաշտոնի վիճակից, թե ուսումնականի և թե արհեստավորի, թե հոգևորի և թե աշխարհականի, որ կամք ունեն մասնակից լինել մեր լուսավորչալ դարու հառաջադիմությանը, օգուտ քաղել նորանից թե նյութապես և թե հոգեպես":

Ստեփանոս Նապարյանի խմբագրած ամսագիրը մի բոլորովին նոր երևույթ էր հայ իրականության մեջ: Նա կարողացավ անսահմանորեն մեծ գործ կատարել ոչ միայն գիտության նվաճումները հայ ժողովրդի մեջ տարածելու և ասպարեկում, այլև կարողացավ գոյության յոթ տարիների ընթացքում բարձրացնել իր ընթերցողների հասարակական գիտակցությունը, պատվաստել սեր և ճաշակ գեղարվեստական գրականության նկատմամբ:

Ամսագիրը հետևողականորեն լուսաբանել է ազգային կյանքի վերածնության խրդիրները՝ ժողովրդի լուսավորությունն ու դաստիարակությունը, բնական գիտությունների մասսայականացումը,

քաղաքակրթության նվաճումների ընդօրինակումը և պայքարը ֆեոդալական հարաբերությունների ու կրոնական նախապաշարումների դեմ:

"Հյուսիսափայլը" ծավալել էր նաև լայն կրթական գործունեություն: Որպես ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման ճանապարհ մատնանշում էր լուսավորությունն ու առաջադիմությունը: "Հյուսիսափայլը" հենց այդպես էլ կոչվում էր՝ "Օրագիր ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության": Տպագրվում էին հետաքրքրական պրոյեկտներ բնագիտության, ճարտարարվեստի, մանկավարժության, հոգեբանության, պատմության և այլ առարկաների վերաբերյալ: Լույս էին տեսնում տեղեկագիտական, գիտահանրամատչելի հոդվածներ:

"Հյուսիսափայլում" տպագրվել են Միքայել Նալբանդյանի հրապարակախոսական, քննադատական, գիտական բազմաթիվ հոդվածներ, գրական-պատմական գործեր, հայ ժողովրդի ազատագրության, քաղաքական, տնտեսական խնդիրների, գրական լեզվի, գրականության ու թատրոնի, լուսավորության վերաբերյալ ուսումնասիրություններ: Ամսագրում 1858-1860 թվականներին առաջին անգամ տպագրվեցին նրա "Հիշատակարանը", "Մեռելահարցուկ" վեպը, բազմաթիվ գիտահանրամատչելի պրոյեկտներ: Այսօր էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ստեփանոս Նապարյանի հրապարակած առաջնորդողները՝ ինչպես՝ "Հայկական լեզվի խորհուրդը" (1858 թ.), "Հայերի կոչումը մարդկության մեջ" (1858 թ.), "Նոր տարվա մտածությունը" (1860 թ.), "Ազգային մտածությունը" (1863 թ.): 1861 թվականին տպագրվել է Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի "Տեր Մարգիսը", այնուհետև Անանիա Մուրանջյանի "Հայ ազգի լուսավորիչը" դրամատիկական երկը:

Մեծ էր "Հյուսիսափայլի" դերն առանձնապես հայ նոր պոեզիայի վարձագծման գործում: Նրա էջերում էր, որ տպագրվեցին Միքայել Նալբանդյանի լավագույն բանաստեղծությունները: Որպես բանաստեղծ կազմավորվեց Սմբատ Ծափապետը, իր առաջին բանաստեղծական փորձերից մեկը տպագրեց Բաֆֆին, որը հաջորդում էր Պատկանյանի հետ աշխատակցել է ամսագրին:

Հարուստ և բազմազան էր

նաև "Հյուսիսափայլի" թարգմանական բաժինը: Ամսագրի հրատարակման ընթացքում այստեղ վետեղվել են քառատունից ավելի թարգմանական գեղարվեստական գործեր: Նրա էջերում էր, որ հրատարակվեց Մանուկ Սահարյանի Լեոնտոսովի "Ղևի" անվուզական թարգմանությունը, տպագրվել են Հայնեի "Գրեմադորներ", Կլեմանս Ռոբերտի "Դքսուհի դը Շելլոգ", Ֆաբր դ'Օլիվիեի "Թախսմաններ", Լյուդովիկոս Դելատի "Պրոպերցիա Ռուսի", Հաուֆի "Ուխտավորքը", Շիլլերի "Մեխնական հարսը" դրամայի, Շատոբրիանի "Ռենե" և "Մթալա" վեպերի, Ֆրանսուա Պոնապի "Լուկրեցիա" դրամատիկական երկի, Ջիովաննիի "Խոսան անսունը" պոեմի թարգմանությունները: Տպագրվել են Կարամյանի "Թշվառ եղիսաբեթը", Նապոլեոն Բոնապարտի կենսագրությունը, Գարիբալդիի կյանքին ու գործունեությանը նվիրված հոդվածը: Հանդեսը թարգմանաբար ներկայացրել է Պուշկինի, Լեոնտոսովի, Բերանտեի, Հայնեի, Պետեֆի, Շիլլերի և ուրիշների բանաստեղծությունները:

Հայ դասական գրողներից շատերը՝ Ծափապետ, Բաֆֆի, Աղայան, Պոռոջյան, Թումանյան, Պատկանյան և ուրիշներ պատանեկության ու երիտասարդության շրջանում ոգևորված են եղել "Հյուսիսափայլով":

\*\*\*

Տասնութ տարեկան էի դարձել, և միայն մի քանի գիրք էր անցել ձեռքս, էն էլ մեծ մասամբ պատահումնաբար:

Եվ ահա էդպես պատահումնաբար էլ էդ ժամանակները ձեռքս ընկան "Հյուսիսափայլի" համարները:

Շատ սիրեցի էդ բացկապույտ, շողարձակ տետրակները և պատանեկան ոգևորությամբ կարդում էի: Առանձնապես դուր էին գալիս Կոմս Էմմանուելի հիշատակարանն ու մյուս գրվածքները, Մ. Նապարյանի խորհրդածություններն ու թարգմանությունները և Սահարյանի թարգմանած՝ Լեոնտոսովի "Ղևը":

Էդպես էլ իմ շատ քիչ կարդացած ու սիրած գրքերից մեկը եղավ "Հյուսիսափայլը":

Միշտ կենդանի, միշտ վառված ու միշտ որոնող հոգին ու ազատ շունչը իր անկապտելի էությունն են եղել:

Հովհաննես ԹՈՒՄՆՅԱՆ

\*\*\*

Ստեղծվում են երկու միմյանց հակառակ բանակներ, ներկայիս խոսքով՝ ազատամիտ և պահպանողական... Առաջինների ներկայացուցիչն է հանդիսանում Մոսկվայում Լապարյան ճեմարանի ուսուցչապետ Ստեփանոս Նապարյանը, ունենալով Նալբանդյանի նման կրակոտ և պերճախոս աշխատակից:

Պերճ ՊՈՆՇՅԱՆ

\*\*\*

Մինչդեռ վարժապետները շարունակ կռիվ էին մղում "Հյուսիսափայլի" հայտնած ազատ մտքերի դեմ՝ նույն վարժապետների աշակերտները անհագ սիրով "Հյուսիսափայլ" էին կարդում և նրա քարոզած ոգովը տոգորվում: Իմ հիշած ժամանակ Ներսիսյան դպրոցի նշանավոր աշակերտները բոլորն էլ "Հյուսիսափայլ" էին համակում և սրտատրոփ սպասում էին Կոմս Էմմանուելի գրվածքներին:

Ղապարոս ԱՂԱՅԱՆ

## Շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը

**Սիրելի ընթերցողներ, շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2013 թվականի 1-ին կիսամյակի համար: Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ խմբագրությունում:**